ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

№ 183/92 «04» 10 2021թ.

# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՊՈԼԻՄԵՐԻԶԱՅԻՆ ՇՂԹԱՅԱԿԱՆ ՌԵԱԿՑԻԱՅԻ (ՊՇՌ) ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՎՃԱՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ առողջապահության նախարարի 2021 թ. օգոստոսի 20-ի թիվ 65-Ն հրամանի պահանջները, ԵՊՀ արհեստակցական կազմակերպության առաջարկությունը, Երևանի պետական համալսարանի աշխատողներին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու նպատակով, ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով.

հ ր ա մ ա յ ո ւ մ ե մ.

1. ԵՊՀ ներկայացվող պոլիմերիզային շղթայական ռեակցիայի (այսուհետ՝ ՊՇՌ) յուրաքանչյուր հետազոտության համար ԵՊՀ հիմնական աշխատողներին վճարել 3000 (երեք հազար) ՀՀ դրամ փոխհատուցում, բայց ոչ ավելի, քան ամսական 2 (երկու) անգամ հաշվարկվով:

2. Սույն հրամանի 1-ին կետով սահմանված փոխհատուցումը վճարել ԵՊՀ եկամուտների և ծախսերի 2021 թ. նախահաշվի 5-րդ հավելվածի «Խրախուսման և ֆինանսական աջակցության ծախսեր» և 13-րդ հավելվածի «Առողջության ապահովագրության ծրագիր» հոդվածներով նախատեսված միջոցների հաշվին:

3. Սահմանել, որ փոխհատուցման համար անհրաժեշտ է կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարին ներկայացնել հետևյալ փաստաթղթերի պատճենները.

- ԵՊՀ հիմնական աշխատողի կողմից ՊՇՌ հետազոտության համար վճարած գումարի ՀԴՄ կտրոնը,
- ՊՇՌ հետազոտության պատասխանը:

Ներկայացված փաստաթղթերը կենտրոնացված կարգով ներկայացվում են ԵՊՀ հաշվապահությանը:

4. Սույն հրամանի նկատմամբ վերահսկողությունը վերապահել ԵՊՀ ընդհանուր հարցերի գծով պրոռեկտորին (Ա. Մալխասյան):

5. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել բոլոր աշխատողներին:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐԻ Ժ/Պ. Հ. Ч. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ